

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Շուրջարիոյ համար
Տարեկան 10 Պր.
Վեցամսեայ 5 »
Սրտասանեմանի հա-
մար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՍԻՎ ԿՃԱՅԵԼԻ
—) —
Գրութիւնք եւ չեն տրուիր
—) —
Իրանուցեան տղոր 20 սան-
րիւն է. և տե՛հ հն աւելի ան-
գամներու համար 20 ՕԼՈ
գեղջ կը շարժայ :

ՇԱԽՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՔԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊՍԱՍԵԱՆՍՈՒ Յ՝ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նամակ եւ դրամ դրկեյ
Խմբագրութեան հասցին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

ՍԵՐ ԲԱԺԱՆՈՐ՝ ՆԵՐՈՒՆ

Կը խնդրենք մեր Պուլիս-
րիոյ և արտասահմանի արգոյ
բաժանորդներէն որ անյայտ ի-
րենց անվճար բաժնեգիրները
մեզ հասցնեն : Նաեւ անոնք որ
չեն ուղեր շարունակել, թող հա-
ճին անմիջապէս ետ դարձնել
թերթերը : Երրորդ թիւէն վերջ
եա չի դարձնող անձերը բաժա-
նորդ կը նկատուին :

Ներկայ շրջանին միայն անոնց
թերթ կը շարունակուի, որոնք անց-
եալ տարուան բաժնեգիրներն վճա-
րած են :

ԱՆՆՈՒՍԱՓԵԼԻ ԵՒ ԲՆԱԿԱՆ ԵՐԵՒՈՅՔ

Յաճախ, գրեթէ շարունակ
լսում ենք՝ թէ հայկական յեղա-
փոխութեան անաշուղթ թիւները
ամենազլխաւոր պատճառներէց
մէկն է և կուսակցութիւնները
գոյութիւնը, որը, իբր թէ ար-
դիւնք է մեր «հնաւանդ անմի-
աբանութեան» :

Դժբախտաբար, անմիաբան
մակդիրը հայութեան ճակատին
դրոշմված է շատ վաղուց, դա-
րերէ ի վեր, մեր պայտերի կող-
մից, որոնք հայութեան կոր-
ծանման իսկական և բարդ պատ-
ճառները չըմբռնելով «անմիա-
բանութիւն» խօսքն են գտել,
կարծես թէ ապագայ սերնդնե-
րի առջեւ արդարանալու միտու-
մով . . .

Այդ շարափաստիկ սծականը
կրկնում են և մեր ներկայ ի-
մաստակ ու մեծ մասամբ շահա-
խնդիր և կարծեցեալ գործիչ
զեկավարները : Միամիտ ժողո-
վորդն էլ, իր պայտերի սւան-
դութեանը ներկայ իմաստակնե-
րին հաւատալով և «անմիաբա-
նութիւնը» ընդունելով իբր մի
ազգային ճակատագրական պա-
տուհաս, համոզվում է որ կու-
սակցութիւնները ծնունդ են
անմիաբանութեան կործանիչ ու-
զու, և իրան տանում են զէպի
աւելի խոր ու մութ անգունդ :

Միանգամայն հաշտվելով այդ
ճակատագրական որոշումի հետ՝
մեր ժողովուրդը շարունակ, թու-
լանում և յուսահատվում է, ու,
փոխանակ համոզվելու որ մեր
կուսակցութիւնները մեր ներ-
կայ եռուն կեանքի հարազատ
ծնունդը են և նրանցից մէկն ու
մէկին է որ թեւ ու թիկունք
տալով պէտք է կարողանայ իր
անտանելի վիճակը բարեփոխել,
ձեռքերը ծալելով անձնատուր է
լինում շարճըճի բախտին . . .

Ոչ, կուսակցութիւնները գո-
յութեան պատճառը անմիաբա-
նութիւնը չէ և ոչ էլ նրանք
կարծված ի շափ ֆիասակար են :
Ռուսական սուածը ասում է «սա-
տանան այնչափ անաւոր չէ,
ինչպէս նրան նկատում են» :
Հոգեւորականութիւնը, դժոխքը
աւելի սարսափելի երեւցնելու
համար, նրա տէր ստատաներին
սարսափելի կերպարանք է տել :
Նոյնը կատարում է և մեր կու-
սակցութիւնները վերաբերմամբ,
ոմանք միամտաբար, ոմանք էլ
զանազան դժուծ հաշիւներէց
զրկված՝ մեր կուսակցութիւննե-
րը նկարագրում են զարհուրելի
գոյներով :

Կուսակցութիւնները անխու-
սափելի և բնական են ամէն մի
յառաջդիմութեան և վերանո-
րոգվելու արամադիր ու ընդու-
նակ ժողովրդի մէջ . նրանց գո-
յութիւնը ժողովուրդի յառաջ-
դիմութեան անհրաժեշտ ազդակ-
ներէց մէկն է :

Կուսակցութիւնները չեն ստեղծ-
վում միայն այն ժողովուրդների
մէջ, որը մեռած անշարժ է և
բոլորովին զուրկ թարմ ու լայն
իդէալներով լի մտաւոր հոսան-
քի կենսարար շնչից : Երբ այդ
բաղձալի հոսանքը մանում է որ
և է կիսամեռ բայց վերակենդա-
նանալու ընդունակ ժողովրդի
մէջ՝ անմիջապէս ստեղծվում են և
կուսակցութիւնները, մինը խա-
զալ բայց մահաշունչ հնութեան
պաշտպան : միսը հնութեան
թշնամի, եռուն, խոտակոյ
բայց նոր և լայն իդէալներով
լի կեանքի : Դրան հետեւում է
կուսակցական պայքարը, այ-

սինքն անմիաբանութիւնը հնի և
նորի մէջ . այդ պայքարը նոյն
չափով կատարի և բիրտ է լի-
նում որչափ ժողովուրդը ազէտ
է և օժտված վայրի բնազդով :
Այնուհետեւ պայքարը անվեր-
ջանալի է, կուսակցութիւնները
սերնդէ սերունդ յաջորդում են
միմիանց, նորը հնանում է, դա-
լիս է աւելի նորը, որը աւելի
լաւ է ըմբռնում ներկայի պա-
հանջները և աւելի լաւ որոշում
ապագայի առաւելութիւնները և
նրան հասնելու յարմար միջոց-
ները : ապրում և գործում է
մինչեւ իր ապագան վերածվում
է ներկայի :

Կուսակցական պայքարի մէջ
ամենաուսուր միջոցներով կուս-
ակցութիւնը լինում է պահպանողակա-
նը, հնութեան և ներկայի պաշտ-
պանը, որովհետեւ զգում է իր
օրհասի մտահալը, աշխատում
է իր կեանքը երկարել և, այդ-
նպատակին հասնելու համար՝
նա շատ անգամ ձեռք է մեկնում
օտար թշնամուն, միայն թէ կա-
րողանայ իր հանդիտար վրդովող
հարազատ եղբայրներից կաղմ-
ված յառաջագէժ կուսակցու-
թիւնը իւրեղել : Մարդկային
իդէալների հորիզոնը լայնցնող,
մարդկութիւնը զէպի յառաջ
մղող հնութեան թշնամի և
ներկայից դժգոհ կուսակցու-
թիւնն է : Կան և մի նպատակի
ձառայող, բայց միջոցներով
սարքեր յառաջդիմական կու-
սակցութիւններ . սրանք եթէ
խիպապէս գաղափարական կու-
սակցութիւններ են, երբեք չեն
աշխատում իրար ֆիասել ստոր
միջոցներով : Ընդհակառակը
հարձակուրդ է պարտի, իրանց
ձգու միներին և գաղափարներին
հակառակ թշնամուն տապալելու
համար՝ ձեռք ձեռքի են տալիս
և վերջը իրանց ուղղութեամբ
գնում : Լինում են և բոլոր կու-
սակցութիւններից արհամարհ-
ված խմբեր, որոնք կաղմված
են լինում ժողովրդի զլվելի և
անպէտք թափթափուկից, զը-
րանք միջառների նման սողում
են զանազան անկիւններում և
յարմար վայրկեանին իրանց

գլուխները դուրս են հանում . . .
Դրանց թէ ծնունդը թէ կեանքը
և մահը բոլորովին անըզգալի է
մնում ժողովուրդների և նրանց
մէջ գոյութիւն ունեցող կուսակ-
ցութիւնների համար : Կուսակ-
ցական կեանքը և պայքարը
միշտ և ամէն ժողովրդի մէջ
այսպէս է եղել և է : Ով չէ հա-
ւատում, թող թերթէ մարդկա-
յին պատմութիւնը :

ՎԱՐՈ

ԳԷՇ ԸՐԻՆ

Ամէն անգամ որ արտասահմանի
հայաբնակ քաղաքի մը ազգայիննե-
րուն միջեւ անհամաձայնութիւններ
կը ծագին, պատակտու մեկը տեղի
կուսակցական, իսկոյն խումբ մը մար-
դիկ կելլան, որոնք կաշխատին բա-
ցարձակապէս յեղափոխական կու-
սակցութիւններու մասը տեսնել ա-
նոնց մէջ, կամ այնպէս ցոյց տալ
հասարակութեան :

Այս կարծիքին գրեթէ միշտ թարգ-
ման եղած են ազգային անգոյն լրա-
գիրները : Չենք ըսեր թէ յեղ. կու-
սակցութիւններն ալ երբեմն գեր չեն
ունեցած այդ կարգի խնդիրներու
մէջ : Բայց կարժէ հասկնալ թէ այդ
զերը այնքան կարեւոր եղած է,
որքան կաշխատին ցոյց տալ շա-
տերը : Ֆիլիպէի մէջ անցած դար-
ձածները կրնան մեզի ստաշնորդ ըլ-
լալ այդ խնդրին մէջ :

Ով որ քիչ ու շատ հետաքրքրուե-
ցաւ այդ խնդիրներով եւ կարգաց
զանազան թերթերու մէջ Ֆիլիպէի
մասին գրուածները, հասկցած ըլլա-
լու է անշուշտ թէ, այդ ամենուն ա-
ռիթ տուողը եղած են այն բողոքները
որոնք ուղղուեցան եկեղեցւոյն յոսի
մատակարարութեան, վարժարանին
փոտած, ամուլ ու ֆիասակար ուղ-
ղութեան դէմ, բողոքները՝ որոնք
պատճառ կըլլային տարիներէ ի վեր
ազգային գործերը իրենց կիսիկ ըրած
մէկ քանի ապիկարներու ֆեֆին
խանգարման, եւ որոնք լաւականա-
բար գէշ տպաւորութիւն թողուցին
այդ ատենուան թրքամոլ թաղական-
ներուն եւ տգէտ հոգաբարձուներուն
վրայ : Ասոնք ատանց հասկցած ըլ-
լալու իրենց ստանձնած պաշտօնին
պահանջները — ինչ որ կը պա-
տահի, քիչ բացառութեամբ, մեր
ազգային բոլոր պաշտօնեաներուն —
իրենց ուղղութեան դէմ եղած բո-
ղոքները անձնական թշնամանքի
տեղ առնելով, եւ մանաւանդ իրենց
արտասուր անցեալին մերկացումէն

սարսափահար, սովէն ջանք թափեցին, ամենէն անարգ ու վատ միջոցներու գիմեցին, բոլոր օգտակար ձեռնարկները վիճեցնելու, կամ անհառ ծրագրերը խափանելու համար: Կոբլ, հակառակութիւն, նախատինք, մասնութիւն նոյն իսկ չի վարանեցան կատարել, եւ այն ալ շատ ու շատ անգամներ, որոնք ի հարկէ պիտի զայրացնէին ամենէն համբերատար հոգիները, պիտի զրգռէին ամենէն պաղաւթի միտքերը ու անտարբեր սեղագիտները: Մինչեւ հոս սակայն կուսակցութիւն չի կար:

Այս պարագաներուն մէջ էր որ եկաւ Արսէն վարդապետ, իրեն ճեղքերով կուսակցականութիւնը: Այս անկարգ կարգաւորը, կուսակցութիւն մը կազմելու խօսակա՛ն մարմանէն զիւրահարած՝ մասնաւոր գիմուսներու մէջ անյաջող ելլելէ ետք, հրապարակային բրտականտայի սկըսաւ: Իր նպատակին հասնելու համար—ինչպէս սովորաբար կընեն—սկսաւ անխնայ հարուածել հայ յեղափոխական կազմակերպութիւնները, հայհոյել, զրպարտել, նախատել ժողովուրդը իր նուիրական սրբավայրին մէջ, արհամարհել ազգային իշխանութիւնները, Թաղական, Պատուրիարք, Սահմանադրութիւն, եւ այլապիով չի բաւականանալով, աշխատեցաւ իր թափփուկ արբանեակներուն ձեռքով հասարակութեան մէջ ամէն տեսակ երկպառակութիւն սերտանել, Հայրիկին տնտեսը խաղալիք ըրած միամիտ ժողովրդին մէջ:

Այս ամենէն ետք, կարելի է հասկընալ թէ ի՞նչ արժէք կրնան ունենալ այն հրատարակութիւնները որոնք աջ ու ձախ յիմար ու անտեղի յարձակումներ կընեն, անկողմնակալութեան գիմակին տակ աշխատելով ծածկել իրենց խանութպանի հաշիւները:

Ի՞նչ հարկ թերթերու մէջ անպատեհ ճողոպտանքներ ընել եւ հակասութեանց մէջ մտնել չքմեղելու համար անձ մը որ նոյն սխալներու մէջ չարաչար խայտառակուած է արդէն: Արսէն վարդապետ ինք իր վարկին վերջին հարուածը տուաւ, իր թողունակաւորական շահատակութիւններով զգուհի գառնալով ամբողջ Պուլկարիոյ հայութեան: Ուստի աւելորդ է այդ պատճառաւ աս ու ան զրպարտելը:

Ֆիլիպի ազգային շահերը փճանալու են թարկուած էին, եկամուտներու ազդիւրները ցածքած, կարուածները գրաւուած, զպրօցը՝ փրտուած, քարացած ուղեղներու ձեռքին մէջ ամբողջ տասնըջորս սարի սպանդանք մը զարձած էր Ֆիլիպի մանկունքներուն որ, զեռ շտկէ շիտակ նախադասութիւն մը կազմել չի սորված, կը պարտաւորէր իր ուղեղը ճաթեցնել Նիկիտի, Նիկիտի, Հայկ Դիւցազնի եւ Վերգիլիոսի պէս խրատիւն գրաբար գրքերու վրայ: Ժողովուրդը բողոքէր իր անտարբերութեան վրայ: Եւ իր անտարբերութեան ժամանակամիջոցի մը մէջ, 40 ուկիթ գումար մը յաջողեցան աւելցնել: Կէջ ըրին: Իրաւունք չունին հարցնելու թէ ի՞նչ կըլլային տասնեակ տարիներէ ի վեր եկեղեցւոյն եկամուտները, ո՞ւր են անոնց արդիւնքը, հաշիւները: Ու այս ամենէն ետք, երբ անգոյն խրատողները կուսակցական խաղերու արդիւնք կուզեն համարել զայն, ու լիբը յարձակումներով կը ջանան անուանարկել այն տեսակ անձեր որոնք երբեք մասնակցութիւն ունեցած չեն այդ կարգի զկայքերու մէջ, մենք իրաւունք ունինք այդ գրուածքները ցնորած մաքրի զտանցանքներ համարելու:

Երեմիական պոռոչաբանութեամբ մանակը վազուց անցած է: Հոտած բանաձեւերով, կոկորդիլոսի արցունքներով չենք յուզուիր այլեւս: Մեր թերթերէն կը սպասենք որ քիչ մը աւելի անհասարկ ըլլան, եւ քանի մը բաժանորդներ թերթ ընդունին մեր թերթը: Իրաւունք քանի մը ըլլանք իրաւունք ունինք այդ գրուածքները ցնորած մաքրի զտանցանքներ համարելու:

Երեմիական պոռոչաբանութեամբ մանակը վազուց անցած է: Հոտած բանաձեւերով, կոկորդիլոսի արցունքներով չենք յուզուիր այլեւս: Մեր թերթերէն կը սպասենք որ քիչ մը աւելի անհասարկ ըլլան, եւ քանի մը բաժանորդներ թերթ ընդունին մեր թերթը: Իրաւունք քանի մը ըլլանք իրաւունք ունինք այդ գրուածքները ցնորած մաքրի զտանցանքներ համարելու:

Ֆիլիպի մը

ԹԵՂԵԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ստորեւ կը հրատարակենք Ափրիկէի Արեւելեան եղբայրներէն, ձիպութի քաղաքէն, մեր մէկ բարեկամին զրկած խիստ շահեկան թղթակցութիւնը: Մեր բարեկամը խոստացած է նաև յաջողական թղթակցութիւններ ուղարկել, «նարժու մի ընթերցողները ծանոթացնելու համար ատ մոռցուած կողմերուն հետ, երկրի բնակիչներուն սովորութիւններուն և մանաւանդ հայ գաղութին վրայ հետաքրքրական տեղեկութիւններ հաղորդելով»:

ձիպութի, 31 Յունիս.

Կարձեմ թէ պիտի ընդունիք սիւնակ մը շնորհել ձեր թերթերուն:

Թերթ մէջ, այս տեղի կեանքէն մերթ ընդ մերթ գրելիք տեղեկութիւններու համար. կեանք մը որ օտար չէ Հայերու և որուն մասին կարգացողը հետաքրքրութեամբ պիտի վերաբերուի, երբ լսէ աշխարհի հեռուոր անկիւններուն մէջ գալով իր հայրենակիցներուն նկարագրերը: Թէև ախար է լսել թափառումներու այդ պատմութիւնը, բայց քանի որ գոյութիւն ունի նա, անյայտութեան մէջ մնալէն լաւ է տեղ մը տալ հայ գաղթականութեանց մարդահամարին մէջ:

Ուրիշ անգամի մը ձգելով այս տեղի հայերուն վերաբերմամբ խօսելը, այս անգամ կը բաւականանամ քանի մը տեղեկութիւններ տալով Յմէնի, մեր գրացի երկրի մասին, որ, վերելու շատ գրաւեց քաղաքական աշխարհի ուղեղութիւնը, կատարուած անցքերուն պատճառաւ:

Եմէն. հաշուարկ երկիր մը որ, շնորհիւ իր նպաստաւոր հանգամանքներուն, թուրք կառավարութեան լուծին սակ ճնշուող շատ մը երկիրներէն աւելի բախտաւոր է: Անպատի զաւակները, թէև զուրկ կը թուրքեան այն ատիճանէն զոր իրենց վիճակակից ուրիշ ազգեր ունին, զուրկ կանոնաւոր կազմակերպութենէ, կը յաջողին սակայն դէմ գնել թուրքի բռնութիւններուն և հարստահարութիւններուն: Իրենց ամբողջ զ/տցածը մէկ բան է միայն. զէնքը ձեռքին պաշտպանել իրենց իրաւունքները: Մահմետականութիւնը որ ամուրկուց մը եղած է իսլամ խոժոժ ամբողջ միացնելու համար, և որ կանխէ իրենց խալիֆային ունոյն իսկ հաստակցին դէմ ձեռք վերցնողը, իր նշանակութիւնը կորսնցուցած է Յմէնցի թաղիկ սրտին մէջ: Մահմետականութիւնը արգելք մը չէ եղած իրեն կուսակցութիւնը կրօնակցին դէմ, իր ազատութիւնը ձեռք բերելու համար, որ սմենէն վեր կը գերադասէ: Ձէնքը, իր անբաժան ընկերն ու պաշտպանը, ձեռք կը բերէ իր ամենաթանկ

խնայողութիւններու գնով: ձիպութի միշտ ամբարած ունի ամէն տեսակ ուղեւորութեան: Արարիոյ մոռացուած ավերակ միշտ բաց են դանոնք ներմուծելու համար. իսկ Անգլիացիք կարծես թէ քուն են եղած և չի տեսնել կը ձեւացնեն այդ ամէնը: Ահա շարք մը նպաստաւոր հանգամանքներ՝ որոնք Յմէնցի իր լազգաւորութիւնն ու յոյսը կը կազմեն: Երկու տարիէ աւելի է որ արձակ համարձակ ձիպութի կը կրեն ու անկէ ամբողջ Արարիոյ մէջ կը տարածեն մեծ քանակութեամբ արագածիկ հրացաններ ու այլ պիտոյքներ՝ որոնց բերանները թուրքի դէմ պիտի ուղղուին: Այսպիսի պարագաներու տակ, այլ ևս հեշտ չէ ճնշել զլուխ բարձրացուցած Յմէնցի որուն սիրտը օրէ օր ալ աւելի կը մխայ ազատութեան տենչով:

Գ. Ա.
Սիլիւստի, 27 Յունիս.

Ինչպէս գիտեն Պատ. թերթին ընթերցողները, Սիլիւստի 60—70 տուն հայերն ալ, իրենց եկեղեցիէն ու երկուս վարժարանէն զատ, ունին նաև իրենց ազգային ընթերցարանը, որ, տեղացի և եկուր ազգայիններու շարժական կանոնաւոր վճարումներով իր ելմուտքը հաւասարակշռելով, երկու տարիներէ ի վեր կը շարունակուի, և յուսալի է որ, այս ուղղութեամբ ընթանալով, կարեսր օգուտներ պիտի մատուցանէ տեղացիներուն:

Արդէն ընթերցարանի ընկերութիւնը, իր հիմնական կանոնադրի արամադրութեան հետեւելով, տարին մէկ երկու անգամ Ընդհ. ժողով կը գումարէ ու ընթերցարանի վարչական մարմնոյ հաշիւները քննելով, ամէն տարեշրջանին նոր վարչութիւն կը ընտրէ:

Ամսոյս 24-ին, ընկերութեան տարեկան Ընդհ. ժողովը գումարուեցաւ որ զբաղեցաւ ընթերցարանի յարակից խնդիրներով,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՂՈՒԿՆԵՐՈՒ ԿԵՆՔԷՆ

Սթրանճան կրկին վերցուց գաւաթը եւ շարունակեց.

—Եղբայրներ, բնաւ չափոսանք հոս թափառական ու մերկ ըլլալու համար: Պուլկարիոյ մէջ մեր խեղճ եղբայրները ա՛լ աւելի թշուառ են. այնտեղ թուրքերը կը հարստահարեն, կը սպաննեն և ազգը յուսահատ կը հեծէ գերութեան մէջ: Մենք զոնէ ազատ ենք. երբ ազատութիւն ունինք, ամէն բան ունինք: Պէտք չէ վճարել, ցորչափ արիւն կայ մեր

երակներուն եւ կրակ՝ մեր սրտերուն մէջ: Մեր հայրենիքը մեզի պէտք ունի. այսօր կամ վաղը դուք ժամը հնչէ, պատրաստ ըլլա՛նք: Այս թուլցած ձեռքերովս իսկ զբօշակը պիտի անհամ անգամ մըն ալ բարձրացնելու Պալկանի վրայ, եւ յետոյ պիտի մեռնիմ: Գուցէ զեռ երկար տանջուինք, զեռ շատ սպասենք, փճանանք Ռուսիոյ զաշաբուն մէջ, սակայն ոչինչ. աղք մը առանց զոնի աղք չէ. Պուլկարիան բազմաթիւ գերի ժողովուրդ ունի, թո՛ղ մեզի նման ալ տանջուողներ ունենայ:

—Հայրուկ ըլլալ կը նշանակէ չարչարուիլ, անօթի մնալ, կոուիլ եւ մարտիրոսանալ: Մեզի նմանները ո՛րքան շատ ըլլան, այնքան լաւ է Պուլկարիոյ համար: Բայց վերջապէս, ինձի կը թուի թէ գործերը պիտի կերպարանափոխուին, քաղաքականութիւնը պիտի իրար անցնի, մեր ձեռքերը զատարկ չի պիտի մնան եւ մեր սիրտերը պիտի սրտփեն ու մենք պիտի գոչենք. «մահ կամ ազատութիւն»: Պիտի մեռնինք փառքով, կոուի մէջ, չը պիտի ստակիրք փողոցային շուներու պէս այս օտարներուն վրայ: Այո՛, զեռ պիտի կրուինք, սիրելի եղբայրներ, Պուլկարիոյ ազատութեան համար. «կեցցէ՛ Պուլկարիան»:

Ահա եւ յայրական աղաղակ մը կրկին զօշակակրին վերջին խօսքերը. գինետունը թնդաց, ամենուն ալ աչքերը փայլեցան մաքուր եւ անձուէր հայրենասիրութեան բողոքով. գուսպները նորէն լիցուեցան, ամենուն մաքրերը եւ սրտերը գրգուռեցան:

գան: Քիչ մը առաջ կոչաւ ու կատարի այս դէմքերը համակուեցան ազնուութեան եւ վճռականութեան յուզիչ արտայայտութեամբ:

«Կեցցէ՛ Պուլկարիան» աղաղակը լսող անցորդները կուտակուեցան գինետան դրան առջեւ և սկսան հետաքրքրութեամբ դիտել անոր մութ անկիւնը: Պոչքով ամբողջովին կը զոչար յուզմունքէ և ուրախութենէն կը փափաղէր զրկել այս անձանութիւնը որոնք սաստիկ հրապուրած էին զինքը՝ իրենց հասարակ զէնքերուն վրայ փայլող վեսութիւնով: Այդ դէմքերուն վրայ կը նշարէր վսեմ գաղափարի մը մարմնացումը. իրեն կը թուէր թէ աստիք բարձր էակներ են, ծնած կոուիլ եւ տանջանքի համար, եւ ոչ թէ հասարակ մահկանացուներ: Մահկանացուները որ

իր նոր վարչութիւնը, որ արգէն գործի սկսած է, ամէն կարելի եղած միջոց ի գործ կը դնէ ընթացքարանի նիւթական ու բարոյական օգտին համար: Այս մասին շնորհակալութեան արժանի է Ընկ. նախագահ Տիար Մ. Յարութիւնեանի վարչութեան ցոյց տուած նիւթական ու բարոյական աջակցութիւնը, որ իր ընտիր սրտի ազնիւ զգացմամբ, հակառակ հարուստ դասակարգի վրայ ծանրացող անտարբեր լինելու սխալ ամբաստանութեանց, բարի օրինակ հանդիսացաւ ամենուն:

Վերջապէս փոքրիկ Սիլիստրէի ազգահիններուն, իրենց համեստ վիճակին հակառակ, հասարակական գործերու մէջ ցոյց տուած այսպիսի ջանքերը ինչպէս և գովելի բծախնդրութիւնը դէպի ընդհանրական կեանքը, շատ ուրախալի է:

Այս գովելի յատկութիւնները փայլող Սիլիստրէի հայ հասարակութիւնը իրաւամբ մտայնել կուտայ այն ցաւը զոր մարդ կը զգայ ուրիշ բազմահայ քաղաքներու հայոց անտարբերութիւնը անսնելով:

Ի նպաստ ընթացքարանի տըրուած երեկոյթին զուտ շահը 290 Ֆր. է կըտուի:

Վաղինակ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Հայաստանի նախկին Տուրուքերան նահանգին Ասպակունիք հին գաւառն է Սասուն: Այդ լեռնային յաղթապանք երկիրը կը տարածուի Տարսուս լեռնաշղթային անմատչելի ապառաժներու ու ձորձորներու միջեւ, Մշոյ Սիւսարին օղակուած մէկ գօտիով, Տարսուս լայն գաջալին հարաւային արեւմտեան կողմը: Բուն Սասունը սահմանակից է արեւելեան կողմէն Մշոյ գաջալին, իսկ թոյ, արեւմտեան կողմէն Փինձի, հարաւային մասը կառածգի մինչեւ Խարզան, Ալիվան ու Բըշերիկ գաւառներու սահմանները: Խարզան գաւառին մէկ մասը՝ ներկայ քաղաքական բաժանմամբ Սասունը կը վերաբերի որով բուն Սասունը կը բաժանուի արեւմտեան և հարաւային մասերու:

Սասունը կը վերաբերի որով բուն Սասունը կը բաժանուի նայ՝ վերին գաւառ, Սասուն, Բունաշէն, Շատաղ, Տալուրիկ, Խուլը, Խիզան ու վերին Խարզան գաւառակներէն:

Այս ընդարձակ տարածութեան մէջ, իրարմէ բաժան բաժան շինուած են՝ 112—115 քիւրդ 65—70 հայ գիւղեր: Ամէն մէկ գիւղի տները իրարմէ գրեթէ 1/4 ժամ հեռաւորութեամբ Պոնտոսի լեռնային ժողովրդեան տներու նման տարտղնուած: Այնպէս որ, իւրաքանչիւր գիւղ 10—12 արբերու և հովիտներու վրայ փռուած՝ ահագին տարածութիւն մը կը բռնեն: Բուն Սասունի մէջ՝ բացի հայ և քիւրդ տարրէն ուրիշ բնակիչ չի կայ: Միայն Տարսուսի հարուային զանազան բնակիչները կը գտնուին, ցանցառ բնակութեամբ:

Սասունի լեռներու մէջ շնանաւոր է Անտօք՝ որուն համար աւանդութիւնը կըսէ թէ՛ Անտօն ճգնաւորի ճգնարանն եղած է ու անոր անունով կոչուած: Նաև կըսէ, Էլը, Սասուն ու Տարուզ գագաթները:

Տարսուսի շղթային այն մասին վրայ կը տեսնուին ծովային խրխուղներու ու մանր ձուկերու քարացած նմուշները, որոնք կապացուցանեն թէ այդ հայկական Տարսուսը, ստորերկեայ ուժերով, դուրս ցցուած լեռնաշարք մը եղած է: Այդ լեռնոտ երկրի արագավազ հեղեղատներուն պատճառով, որոնք գարնան անհամար ձորեր ու հովիտներ կը լիցնեն, շատ տեղեր, հողերն զուտ աւաղտ են, մանաւանդ բարձր ու ապառաժոտ դարձուածները, զրեթէ շատ սոսակ պտղաբերութեան անյարմար:

Հանքաբանօրէն, Սասունի լեռնային շղթան՝ կիլիկիոյ սարերու նման, երկաթի ու ծծումբի տառա հարստութիւն կը պարունակէ ծոցը: Այս մասին անուանի է Տալուրիկի երկաթի հանքը: Ընդհանրապէս երկրի բնական

այս հանգամանքին Սասունցին ալ՝ Ձէյթունցիին պէս՝ իր ամէն մէկ պէտքերը՝ իր երկրէն կը ճարէ: Իր շինած լայն բերան հրացանը, զրահապատ վահանը գոթածեւ սուրն ու զօրաւոր վառօթի մուխը՝ իր անհամեմատ կատարեալ ու նոր զէնքերով թշնամիին նոյնքան սարսափ ու մահ պատճառեցին:

Այդ անմասն լեռնային երկրին ամէն կողմը վաղուց զետեւն ու առուակները՝ տարուան զեղեցիկ եղանակին, նոյն հպարտ աշխարհին միւս գեղեցկութիւնները կը գերազանցեն: Լեռնային այս երկիրը, ուր գրեթէ դարունը մայիսէն կըսկսի, ձմեռատեն, ամրան առողջ ու զով եղանակի հակառակ, խիստ ախտ է: Այնպէս որ՝ նոյն մեքերէն մինչեւ մարտի կէսը՝ ճամբորդելը ահաղին զըժուարութիւններու կը հանդիպի, մանաւանդ զեկտեմբերի 15—20 էն մինչեւ վեարուարի վերջերը, որուն միջոցին տեղացող ձիւներէն կազմուած զէղեցի վար գահավիժելով հովիտներն ու ճամբաները կը գոցեն, հազորգակցութիւնները կընդհատեն ու շատ անգամ ճամբորդներու կեանքին վտանգ կը սպառնան:

Ամրան եղանակին՝ այդ երկրի օդը իր մաքրութեամբ ու առողջութեամբ հիանալի է: Այն սիրուն լեռներն ու կանանչ ձորերը պնտուած են զոյնզոյն ծաղիկներու անմահական բուրբոններով որոնց թագուհին է «կարմիր ռուշանը» որուն գեղնազոյն սիրուն պսակը, հիանալի հիւսւածքով մը ձեւացած, բարձր ու քարքարոտ տեղերու մէջ միայն կ'աճի մէկուսի:

Գ.Ա.Ղ.Ս.ՊեՏ

(Շարունակելի)

—)(—

ՔՐՈՆԻԿ

«Անահիտ»ի վերջին թիւը կը պարունակէ նուպար փառաբան ձին ու գործին վրայ կարեւոր ուսումնասիրութիւն մը: Զօպանեան աշխատած է վերլուծել այդ մեծ հայ վարչապետին հոլին, ցոյց տալ թէ ինչպէս նուպար, հակառակ ապրած օտար միջավայրին, միշտ հայ մնացած է, և իր ցեղին ճշմարիտ տիպարը: Կարծէ որ ամէն հայ ուշադրութեամբ կարգայ այդ շահեկան ուսումնասիրութիւնը:

—Նոյն հանդէսին մէջ կը կարգանք նաև Վ.Թ.Ս.ՊեՏ Պէրարի մէկ նամակը խմբագրութեան ուղղուած, ուր յարգելի երիտասարդ գրագէտը, իրեն յատուկ խիստ գրաւիչ ռեզումը, իր համակրութիւնը կը բացատրէ դէպի Հայ ազգը, և անցեալի դառն աղետներուն վրայ մեր ուշադրութիւնը հրաւիրելով, կը թըռէ միւս կողմէ անոնց ունեցած արդիւնքը յաշո՝ Եւրոպական տէրութեանց և ժողովուրդներու և նոյն իւր հայ ազգին ընդհանրապէս, ու թախանձագին կը լինգրէ որ այլ ևս կողմնակի շարժումներ տեղի չունենան, որոնք կրնան շատ աղետաբեր ըլլալ հայ ժողովրդին:

Վ.Թ.Ս.ՊեՏ, որ ծանօթ է մեզ հայկական դատին պաշտպանութեան համար իր մշած ահագին կռիւներով ամենէն վատ ու ամենէն թրքաւէր կառավարութեան մը առեւ, կատարեալ անկեղծութեամբ ու անշահախնդրութեամբ կը խօսի անշուշտ, թէիւ չի կրնար այնքան մօտէն մեր ցաւերուն գիտակից ըլլալ ու շղթալ մեր վիճակին բոլոր դառնութիւնը: Այսու հանգեք Պերար կրնայ վստահ ըլլալ որ Հայ ամէն ժամանակե աւելի իր վիճակին գիտակցութիւնն ունի, և իր յեղ. կազմակերպութիւնները լուրջ գործունէութեան մը կը պատրաստուին այլ ևս:

—Օր. Զապէլ Յովհաննէսեան «Իւմանիթէ նուլէրի փետրուարի թուին մէջ յաջող կերպով թարգ-

առուուն լաւ չէր երեցած, հիմակ ազնիւ ու մեծ մարդու մը փոխուած էր: Սթրանձախ զօրաւոր ու համազօք խօսքերը դեռ կը ծփային իր տականքներուն շուրջը. նա առաւ պաւթը և բոստանի լուսնեան մէջ՝ որ նոր տիրած էր՝ գօչեց իր հնչուն ձայնովը. «Կարծես»-ը, կեցցէ Սթրանձան, բարձրացնէ՛ք զրօշակակիրը, բարձրացնէ՛ք»: Ու քսնի մը նուժկու ձեռքեր վեր բարձրացուցին յուզուած ձերուսի գրօշակակիրը:

Պոչքովի աչքերը փայլեցան և այստեղ կարմրեցան, ամբողջ մարմինը անդազին յուզմունքի մը ենթարկուած էր: Այն փութկուսութիւնը որով գինիին ըստակը պարօպեց, իր վրայ հրաւիրած էր ուրիշներու ուշադրութիւնը: Ամէնքն ալ անոր կը նայէին ու կը հիանային: Սթրան-

ձան սաստիկ զգացուած՝ աղամայ սկսաւ զկպի անոր նայիլ:

Յանկարծ Մակեդոնսքին վերցուց գաւաթը և հանդիսաւոր կերպով ըսաւ.

—Պարսնի՛ք, Պոչքով երեկ թուրքիայէն եկաւ, այնտեղ իր անկախ հոգին չը կրցաւ գիմանալ մեր հինգ-դարեան թշնամուոյն բոնութեանց: Եկաւ մեր քով, միասին կրեցու մեր պատան մը չոր հացը, սո՞ք ու տանջանքը. ճիշդ մեզի պէս ըբաւ, մեր եղբայրն է և արժանի գաւաթը Մար Պուլիարիոյ. կը խմեմ մեր ամենէն երկատարող ընկերին կինացը:

—Կեցցէ՛ Պոչքով:

—Կեցցէ՛, գոռացին ամէնքը միաբերան:

—Կեցցէ՛ պուլիար երկատարողութիւնը, բարձրացնէ՛ք: Ու քսնի մը

տասնեակ՝ ձեռքեր վեր բարձրացուցին շուարած և յուզուած Պոչքովը, մինչեւ ձեղուն:

Եւ այսպէս Պոչքով նայող մկրտեցին:

Կրակոտ զգացումներն ու դառն յիշողութիւնները արթնցան Տիմիթրիի, Թօթիի և Բանաեթի սրտերուն մէջ: Այս ահեղ հոգեկան յուզմունքը պէտք էր նեղուած ու տանջուած հայրուկներու կուրծքերէն ելք մը դառնար. և ահա ժայթքեց երգը.

«Փողը կը հնչէ, Պալագանը կը զընգայ...»:

Այս հայրուկային երգի տոնական հնչումները, որոտացուցին Սթրանձախի գինեուունը, զորս ելան փողոցը, և անցան աւելի հեռուն. կարծես թէ գաղտնի այրի մը բերնէն հրէշային ձայներ կը թռէին:

Հո՞՞ք բազմութիւն մը որ հետզհետէ կը սուռարանար, հաւաքուեցաւ գինեուան առջեւ: Ողբերուած խումբը կը շարունակէր երգել: Սթրանձան գլխաբաց և ոտքի վրայ կը մասնակցէր խումբին. և երբ երգը աւարտեցաւ, յափշտակուած գօչեց. «Ա՛խ, սիրելի հայրենիք, քեզի համար միշտ պիտի կուտիմ»: Չափազանց յուզուեցաւ, աչքերը արեւնով լեցուեցան. ու երբ երգել յոգնեցան՝ խումբը նստաւ սեղաններուն առջեւ, դէմքերը խաղաղեցան. սիրովիչ և միսթարիչ զգացում մը քաղցր պալատանի նման ներգործեց թափառական հայրուկներու հոգեկան վերքերուն վրայ:

Իսկ ազատ Ռուսահայր ծաղրելով կը պոռային. «Պուլիարի պեցի» որ կը նշանակէ արբած պուլիարներ...

Թաւր. Պ. ՍԻՐԵՄՁԵԱՆ

—)(—

